ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1382-Ա « 10 » ապրիլի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆԱԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշմամբ հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» 31-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների 45-րդ կետի 1-ին ենթակետը.

1.Երևանի քաղաքապետարանի ենթակայության մսուր-մանկապարտեզների աշխատանքային ռեժիմը սահմանել ժամը 08:00-ից մինչև 17:30-ը:

2.Երևանի քաղաքապետարանի ենթակայության մսուր-մանկապարտեզներում երեխաների մնալու տևողությունը սահմանել ժամը 08:30-ից մինչև 17:30-ը:

3.Երևանի քաղաքապետարանի ենթակայության մսուր-մանկապարտեզներում երեկոյան ժամերին երեխաներին պահելու տևողությունը սահմանել ժամը 17:30-ից մինչև 19:00:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի վրա:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ